ՄՈՍԿՎԱ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ, ՊՐԵԶԻԴԵՆՏ ՎԼԱԴԻՄԻՐ ԼԵՈՆՏԵՎԻՉ ԿՈՄԱՐՈՎԻՆ

Թանկագին Վլադիմիր Լեոնտեիչ.

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գիտությունների Ակադեմիայի հանդիսավոր բացման բերկրալի օրը Ձեզ, մեր երկրի ականավոր գիտնականիդ, ՍՍՌՄ գիտական մտքի շտաբի ղեկավարիդ, հղում ենք մեր սրտագին ողջույնը։

Իրականացնելով Լենինի-Ստալինի ազգային իմաստուն բաղաքականությունը, Դուք, Թանկագին Վլադիմիր Լեոնտեիչ, մեծ ու շնորհակալ աշխատանք եք ծավալել գիտական նոր կենտրոններ կազմակերպելու ուղղությամբ։ Ձեր անմիջական ղեկավարությամբ են կազմակերպվել ֆիլիալները ու բաղանները ազգային ռեսպուբլիկաներում ու մարզերում։ Ձեր հմուտ ղեկավարության շնորհիվ նրանք դարձել են գիտության և կուլտուրայի զարգացման իսկական օջախներ։

Վլադիմիր Լեոնտեիչ Հայկական ֆիլիալը ևս Ձեր և Ձեր կեկավարած ՍՍՌՄ Գիտությունների ամբողջ Ակադեմիայի հոգատարության առարկան էր։ Նա գիտական մտքի կենտրոն է դարձել մեր ռեսպուբլիկայում, նա հաստատել է Հայկական ՍՍՌ լավագույն գիտնականներին, որոնց մեջ քիչ չեն Ձեր աշակերտները ու հետևորդները։

Թանկագին Վլադիմիր Լեոնտեիչ. Սովետական Հայաստանում Գիտությունների Ակադեմիա կազմակերպելը մեծ պատիվ և մեծ վստահության վկայական է նրա գիտնականների համար։ Մենք անդուլ կաշխատենք այդ վստահությունը արդարացնելու համար։ Մենք ամեն ջանք կգործադրենք գիտության ծաղկման համար, որին Դուք նվիրել եք Ձեր ամբողջ կյանքը։ Ձեզ և ՍՍՌ Միության Գիտությունների Ակադեմիայի հետ միասին մենք ամբողջ ուժով կօգնենք Հայրենիքին գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ նրա կողմից մղվող հերոսական պայքարում։

Թանկագին Վլադիմիր Լեոնտեիչ. մենք խորապես գիտակցում ենք, որ Սովետական Հայաստանում գիտական մտքի արդյունավետ զարգացման նախադրյալներից մեկը կլինի մեր երիտասարդ Ակադեմիայի սերտ կապը Ձեր գլխավորած՝ ՍՍՌ Միության Գիտությունների Ակադեմիայի՝ որպես սովետական առաջավոր գիտության ուղեղի հետ։ Մենք լիակատար վստահությամբ հույս ունենք Ձեր ուշադրության և Ձեր օժանդակության։

Մենք անսահմանորեն ուրախ ենք հաղորդելու Ձեզ, Թանկագին Վլադիմիր Լեոնտեիչ, որ մեր առաջին ընդհանուր ժողովը Ձեզ, սովետական

խոշոր գիտնականիդ, Մեչնիկովի և Սեչենովի, Բարլոչկովի և Տիմիրյազևի, Կարպինսկու և Պավլովի հիանալի տրադիցիաները շարունակողիդ, միաձայն ընտրեց Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գիտությունների Ակադեմիայի պատվավոր անդամ։

Ընդունեցեք, Վլադիմիր Լեոնտևիչ, մեր սրտագին և խորին շնորհակալություն։ Հանկանում ենք Ձեզ արդյունավետ աշխատանքի երկար տարիներ ի բարօրություն մեր սիրելի Սովետական Հայրենիքի, ի ծաղկումն սովետական առաջավոր գիտության։

Ընդունված է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի բացման նվիրված հանդիսավոր նիստում, 1943 թ. նոյեմբերի 29-ին։